Հավելված N 1

Սևան համայնքի ավագանու
«09» սեպտեմբերիի 2021 թվականի
N 50-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

## ՈՒՂԵՐՁ

Սևան համայնքի հարգելի բնակիչներ,

Սևան համայնքի ավագանին քննարկելով համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով Սևան համայնքի բնակչության շրջանում տիրող գերակա տրամադրությունը այլ համայնքների հետ Սևան համայնքի միավորման գործընթացի նկատմամբ,

Հաշվի առնելով, որ այլ համայնքների հետ միավորումը նվազեցնում է համայնքի բնակչության ներկայացուցչական մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,

Միավորումը համայնքի համար լրացուցիչ ֆինանսական հնարավորություններ կամ նոր լիազորություններ չի առաջացնում, նվազեցնում է մինչ այս ունեցած ռեսուրսների ինքնուրույն ու սեփական պատասխանատվությամբ տնօրինումը հանուն Սևան համայնքի բնակիչների բարեկեցության,

Միավորման առաջարկի նախագծում հստակեցված չէ միավորան հանրային շահը,

Սևան համայնքի ավագանին արտահայտելով իր կանխորոշիչ դիրքորոշումը, հայտարարում է, որ նպատակահարմար չի համարում համայնքի միավորումը որևէ այլ համայնքի հետ:

Որպես Սևան համայնքի ներկայացուցչական մարմին՝ համայնքի ավագանին վստահեցնում է, որ կիսելով համայնքների միավորման գործընթացի նկատմամբ բնակչության գերակայող կարծիքն ու դիրքորոշումը, ղեկավարվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասություններով՝ ներկայացնելով համայնքի ողջ բնակչության շահերը:

Համայնքի ավագանին ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և ՀՀ Ազգային ժողովը կլսի համայնքի կարծիքը համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ**_____

Կ.Տ.

Հավելված N 2

Սևան համայնքի ավագանու
«09» սեպտեմբերի 2021 թվականի
N50-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

## ՈՒՂԵՐՁ

**Գեղարքունիքի** մարզի Սևան համայնքի ավագանին՝ որպես ներկայացուցչական մարմին, քննության առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախաձեռնած համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով այդ գործընթացի նկատմամբ համայնքի բնակչության գերակշռող կարծիքը, նպատակահարմար չի գտնում **Գեղարքունիքի** մարզի Սևան համայնքի միավորումն այլ համայնքների հետ:

Համայնքի ավագանին ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և ՀՀ Ազգային ժողովը կլսեն համայնքի կարծիքը համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովեն Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ _____

Կ.Տ.